


առաջացրած տրամագրութիւնը: Առաջին երգն ամբողջ մի ստանաւորով աշխարհագրութիւն է. իսկ երկրորդ երգը մի հասարակ խրատ: Ժամանակի պահանջն է այդպէս) ոտանաւոր շինել մի նիւթ, որի համար ոտանաւոր պէտք չէ: Այսպէս է, օրինակ, և Մկրտիչ Աւգիւրեանի (1762—1854), մեծ բառարան կազմողի «Բան գործնական» (1812 թ.), որ է գրաբար ոտանաւորով մի «կրթութիւն չորս բարոյական առաքինութեանց վրայ», և կամ Ման. Զախջախեանի «Արուեստ Աստուածսիրութեան» խրատականը (1819 թ.):

Բայց չնայելով այս ամենին՝ Ինճիճեանի գրուածքը իւր ժամանակին իւր տեսակի մէջ մի նորութիւն է և մի քայլ առաջ է տանում մեր բանաստեղծութիւնը: Նորութիւնը նիւթի ընտրութիւնն է. այն՝ որ Ինճիճեանը ցոյց է տալիս, թէ բացի կրօնականից, «խրատօրէն երգերից», էջմիածնի ներքողեանից և գարնան վարդ ու սոխակից, ոտանաւորի նիւթ կարելի է դարձնել և բնութիւնը, երգել բնութեան տեսարանները, կամ, ինչպէս ինքն է ասում, կենդանագրել Արարչի այդ դեղեցկագիր դորձը, «կրկին նորոգել բնութեան ստեղծուածը»: Նա իւր երկի սկզբում, ինչպէս հներն անում էին, ղիմում է «զուարթուն սգուն», որ սովորեցնէ իրեն «զգու նիւթական յաննիւթ գոլ բանին» յեղուլ, բայց դժբախտաբար զուարթուն ոգին օգնութեան չէ հասնում և Ինճիճեանի միայն նպատակն է գովելի մնում:

Մ. Արեղեան



ՀԱՅ ԻՐԱՆԻԱՆԱԿԱՆ ՍԻՄՖՈՆՆԵՐԸ

Ազգագրութիւնը հայ բանասիրութեան մէջ, հայ հնութիւնների և արդի ժողովրդական բարբերի ու սովորութիւնների ուսումնասիրութեան մէջ, թէև մանկական հասակ է ցոյց տալիս, բայց արդէն պատկառելի մի տեղ է գրաւել: Նա մեծ դրաւականներ է ներկայացնում ապագայում աւելի ևս լայն ծաւալով ու հիմունքներով ծառայելու ոչ միայն հայ կուլտուրական պատմութեանը, այլ և ընդհանուր հանրամարդկային գիտութեանը: Այն

հարուստ նիւթը, որ ամբարուած կայ մեր ժողովրդի ընտանեկան ու հասարակական յարաբերութիւնների, բարոյական—կրօնական աշխարհայեացքների անսահման մըթնոյորտում, որոշ չափով արձանագրուած է և դեռ շարունակուում է արձանագրուել թէ պատահական դիլլետանտների և թէ բանահաւաք ազգագրագէտների ջանքերով:

Սակայն երբ աչքի ենք անցկացնում հաւաքուած ու հրատարակուած բոլոր ազգագրական նիւթերը, մեր ուշադրութիւնն է դրաւում հէնց առաջին հայեացքից մի հանգամանք. կարծես այդ նիւթերի մէջ համեմատաբար պակաս են ու շատ քիչ տեղ են բռնում իրաւաբանական հնուքիւնները:

Ի՞նչ ենք հասկանում իրաւաբանական հնութիւն ասելով:

Իրաւաբանական հնութիւնը հարկ է ըմբռնել իբրև մի հասկացողութիւն, որ միանգամայն տարբեր նշանակութիւն ունենալով, զատուում է իրաւունք ասած հասկացողութիւնից. իրաւաբանական հնութիւնը մատնանշում է մի կեանք, ընդգրկում է մի բովանդակութիւն, որը աւելի լայն սահմաններ ունի, քան իրաւունքի պատմութիւնը: Իրաւունքի շարքին ենք դասում լոկ այն, ինչ որ դրոշմուած է ժողովրդի գիտակցութեամբ, իբրև որոշ վարմունքի ու գործունէութեան անհրաժեշտ պայման: Մէկը միևսից դրամ է փոխ առնում, կամ ձեռք է բերում մի իր սեփականութեան համար: Այդտեղ իւրաքանչիւրը դրանցից իր գիտակցական վարմունքի ապացուցման համար դիմում է յատուկ վկայութիւնների, իրաւական ձևերի, որոնցով հաստատում է այդ սեփականութեան անցնելը մէկից դէպի միւսը: Սակայն կեանքում գոյութիւն ունեն բազմաթիւ երևոյթներ, որոնք պարզաբանում են ժողովրդի հայեացքներն ու հասկացողութիւնները առանց դիմելու այդ տեսակ արտաքին պարտադիր յատկանիշների ու ձևական պահանջներին: Ժողովրդական կենցաղի բազմազան կողմերում հարսա-

նեկան ծէսերում, ընտանեկան սովորութիւններում ու բարքերում, հաւատալիքներում և այլն մենք ընտել ենք նկատի խստագոյն պահանջ, թէ անպայման պիտի կատարել այս կամ այն ծէսը, սովորութիւնը, այդտեղ չենք տեսնի օրէնքի սպառնանք, թէ չկատարելու դէպքում յանցաւորները պատժի կենթարկուեն: Ոչ, այդ չենք գտնի իրաւաբանական հնութիւնների մէջ, օրոնք մեզ ծանօթացնում են միայն ժողովրդի առօրեայ կեանքի վարուեցողութեան ու գործողութեան զանազան ձևերի հետ:

Իրաւաբանական հնութիւններն ինքնըստինքեան պէտք է ծառայեն իբրև նպատակ ուսումնասիրութեան: Այդ ուսումնասիրութեան ծաւալն ու սիւստեմը ամբողջովին կախուած է նախնական իրաւաբանական կացի, իրաւական հայեացքների մնացորդներից: Միևնոյն ժամանակ հարկ չկայ կարծելու, որ այդ իրաւաբանական հնութիւնները ուսումնասիրելու համար անհրաժեշտ է միայն խորասուզուել անցեալի փոշիների մէջ, բաւականանալ լոկ փորփրելու ալեւոր պատմութիւնը, ժողովրդի նախնի կեանքի հնադարեան յիշատակների չեղձակոյտերը...: Նոյն, նոյն իսկ մեր ժամանակակից ժողովրդի կեանքն էլ իր նշանակութիւնն ունի իրաւաբանական հնութիւնների հետազոտողի համար: Այդ կեանքի ուսումնասիրութիւնը դառնում է մի օժանդակ միջոց լրացնելու այն, ինչ որ կորել է, չի պահպանուել նախնի յիշատակարաններում, ժողովրդական արդի նիստուկացի ձևերում, նրա աշխարհայեացքում: մնացել են տակաւին հնութիւնների հետքերը:

Նախնական աշխարհայեացքներում մտածողութեան եզանակները զուրկ էին վերացական ընդհանրացումից, և եթէ ընդհանրապէս ծագում էին վերացական մտապատկերներ ու հասկացողութիւններ, նրանք անպատճառ կազապարւում էին կենդանի, կոնկրէտ ձևերի մէջ: Ահա իրաւաբանական հնութիւնների հետազոտութեան տեսակէտից շատ մեծ նշանակութիւն ունի հաւաքել այդ բո-

լոր նիւթական ձևերը, կոնկրէտ մարմնացումները, որոնցով արտայայտուած էին նախնական իրաւաբանական հասկացողութիւններն ու յարաբերութիւններն:

Տարաբաղաւաբար հէնց այս իրաւաբանական հնուութիւնները բացակայում են առձեռն եղած ազգագրական մեր գրականութեան մէջ: Սրա պատճառները մասամբ պէտք է որոնել այն հանգամանքում, որ մեր բանահաւաքները սովորաբար պատահական սիրողներ ու գիլլետանտներ են եղել, որոնք անշուշտ այնքան պատրաստ չէին, որ օժտուած լինէին իրաւաբանական հնութիւնների էութիւնն որոշելու և ըստ այնմ էլ նիւթեր հաւաքելու: Միւս կողմից էլ ազգագրական մասնագէտ բանահաւքները իրենց ուշադրութիւնը դարձրել են բացառապէս ժողովրդի ծէսերի, բարքերի, արտաքին կացի, ֆօլկլօրի և այլ կողմերի վրայ, անուշադիր թողնելով իրաւաբանական հնութիւնները, որոնց հաւաքելը երևի նրանց կարծիքով պիտի լինի ոչ թէ ազգագրագէտի, այլ իրաւագէտի գործը:

Բայց և այնպէս հայ ազգագրական հրատարակուած բոլոր նիւթերի մէջ արդէն իսկ նկատելի են այնքան բնորոշ փաստեր, հետաքրքիր գծեր, որ առանց վարանելու հնարաւոր է նոյն իսկ ուսումնասիրութեան փորձեր կատարելու և որոշ չափով ուրուագծելու հայ սովորութեան իրաւունքի ամբողջ պատկերը, վերարտադրելու մեր մտապատկերների մէջ հայ իրաւաբանական հնութիւնները: Այդ փաստերն ի հարկէ մեծ մասամբ անգիտակցաբար են ժողոված եղել հայ բանահաւաքների ձեռքով իբրև սոսկ սովորութիւններ նիւտուկացի, հաւատալիքներ և այլն: Սակայն այդ նիւթերը գուցէ և միանգամայն անսպասելի մեր բանահաւաքների համար, դիպուածով դուրս են գալիս իբրև աղբիւրներ հայ իրաւաբանական հնութիւնների: Եւ դա շնորհիւ մի հանգամանքի, որ հայ ազգագրական ժողոված նիւթերի մէջ գտնուած ենք բաւականաչափ սխալներ:

Սխալները իրաւաբանական հնութիւնների ուսումնասիրութեան մէջ պիտի բռնի ամենաառաջին տեղը:

Սիմբուլը յունարէն բառ է σύμβολον, որ թարգմանում է նշան, խորհրդանշան, Ընդհանրապէս սիմբոլ ասելով պիտի ներկայացնենք մեզ որոշ գաղափարի կամ զգացմունքի պատկերացումն, իրեն յատուկ մի ձևի, կերպարանքի մէջ։ Իսկ ժողովրդական իրաւաբանական կացի նկատմամբ սիմբուլը իրաւաբանական գործողութիւնների այլաբանական պատկերացումն է։ Նախնական կուլտուրական աստիճաններում մարդս զուրկ լինելով որոշ երևոյթներն ու գործողութիւնները առարկայացնելու, վերացականացնելու ընդունակութիւնից, հակուած էր միշտ իր բոլոր իրաւաբանական յարաբերութիւններին վերաբերեալ հասկացողութիւններն ու մտքերը արտայայտել զգայական, կոնկրէտ պատկերացումներով։ Տուրևառի, դաշանց, ընտանեկան և ընդհանրապէս քաղաքացիական կեանքի մէջ համաձայնութիւններ կայացնելիս նախնական մարդը իւր իրաւաբանական հասկացողութիւնները վերածում է տեսանելի առարկաների և գործողութիւնների, որոնք տպւում են նրա յիշողութեան ու մտապատկերների մէջ, դրոշմւում են նրա զգայարանքներում և այդպիսով դառնում են այդ հասկացողութիւնների սիմբոլներ։ Նոյն իսկ մեր օրերում ժողովուրդը զանազան իրաւաբանական համաձայնութիւններ ու գործողութիւններ կատարելիս սովորաբար դիմում է որոշ ծիսական, սիմբոլիական ձևակերպութիւնների, որոնք ժողովրդական իրաւագիտակցութեան մէջ խորհրդաւոր նշանակութիւն ունեն և պարտադիր են համարւում, Միայն այդ սիմբոլիական ձևերի շնորհիւ նրա իրաւաբանական հասկացողութեան մէջ կանգուն է մնում իրաւաբանական յարաբերութիւնները կարգաւորող նորմերի կոնկրէտ ոյժը։

Ահա այդ տեսակ սիմբոլներ են, որ մենք գտնում ենք հայ ազգագրականի հաւաքած նիւթերի մէջ։ Այդ նիւթերի հիման վրայ եզրակացնում ենք, որ հայ ժողովուրդը արտայայտել է իւր իրաւաբանական հասկացողութիւնները կոնկրէտ ձևերով, ուէալ մարմնացումով, որոնք այլաբանական պատկերացումներ են նրա իրաւագիտակցու-

թեան, նրա սոցեալ-հասարակական յարաբերութիւնների բնոյթի:

Հին գերմանացիների մէջ գոյութիւն ունէր իրաւաբանական մի սովորութիւն, տուրեառի կամ հոմանիշ համաձայնութեան մի գործողութիւն կատարելիս ու վերջացնելիս, միշտ խմում էին գինի, որով հաստատուում էր կայացրած իրաւաբանական գործողութեան սլոք: Սա կոչւում էր Litkouf, ուրեմն մի սիմբոլ, որով այլաբանօրէն պատկերացնում էին իրաւաբանական գործողութիւնը: Նոյն էին անում հին և ժամանակակից սուսները, օրոնք մի գործ յաջող վերջացնելիս սովորաբար ասում են «спрыскивать виномъ», որ շատ անգամ արտայայտուում է նաև «могарычъ» բառով: Ռուս գիւղացիների սովորութեան իրաւունքի մէջ մինչև վերջին ժամանակները հարսնախօսութեան ու նշանադրութեան համաձայնութիւնը կնքում էին գինի կամ օղի խմելով, որի իրաւաբանական նշանակութիւնը երևում իր նաև մի առածից՝ «пронитая дочь — не своя, чужая»:

Նոյն Litkouf-ը տեսնում ենք Հայոց սովորոյթներում: Անժխտելի փաստ է, որ հայ ժողովրդի հարսանեկան սովորութիւններում թէ հարսնախօսութեան, թէ նշանադրութեան, թէ բաշլըղի (զալանի), թէ օփաթի և այլ նոյնանման հարցերի վերաբերեալ համաձայնութիւնները կընքում էին օղիով, որը սիմբոլիական ձևով հաստատում էր կատարած գործողութեան իրաւաբանական նշանակութիւնը: Բազմաթիւ օրինակներից յիշենք միայն մի քանի բնորոշ նմուշներ:

Ձաւախքում, երբ վերջնականօրէն որոշում են հարսի և փեսացուի երկու կողմերն վճարելիք հաղեմասու քանակը, աղջկայ հայրը օղի է բերում, և սկսում են երկու կողմերը «աչքի լուսի» թասը խմել: Նմանապէս նշանադրութեան ատեն Ձաւախքում «աչքի լուսի» օղին են խմում, երբ քահանան աւարտում է նշանի օրհնու-

թիւնը՝ Աչքերդ լուս, Աստուած բարի վայելումն տայ
խօսքերով¹։ Նոյնն է տեղի ունենում Բուլանըխում² և
այլուր։

Սիմբոլներով են որոշւում նաև հայրական իշխանու-
թեան, patria potestas-ի, իրաւաբանական հասկացողու-
թիւնը զանազան ժողովրդների մէջ։ Մի քանի հայաբնակ
գաւառներում տիրող սովորութիւններից յայտնի է, որ
երեխան ծնուելիս, տատմայրը լողացնելուց յետոյ նախ
քան մօրը կողքին դնելը, տալիս է հօրը ձեռքը և ապա
յանձնում մօրը։ Նոյնն է տեղի ունենում որդեգրութեան
դէպքերում։ Հին-Նախիջևանի գաւառում մի երեխայ
որդեգրելիս կինը երեխային անց է կացնում իր շապկի
միջով, իսկ ամուսինը երեխային ընդունում է իր գիրկը
կնոջ շապկի տակից։ Սրանով հայրը հաստատում է, թէ
այդ երեխան այսուհետև իր որդին է ճանաչուելու, ու-
րեմն իր իրաւունքին է ենթարկուելու³։ Այսպիսի մի սո-
վորոյթ գոյութիւն է ունեցել նաև հին ռուսների մէջ,
ուր իշխան Օլէգը իր ձեռքն է վերցրել Իգորին և սրանով
վերջինին իր ժառանգն է ճանաչել։ «Вда Рюрикъ Олегу
на руцѣ сынъ свой Игорьъ»⁴։

Համանման սիմբոլիական նշանակութիւն ունեն այն
սովորոյթներն ու ծէսերը, որոնցով ուղեկցւում են հարսի
մուտքը իր սկեսրանց տունը, ուր նորահարսը մտնում է
տան մեծի՝ նահապետի՝ հայրական իշխանութեան ներքոյ —
filios loco*։

Վերջապէս յիշենք ընդհանուր բնաւորութիւն ունե-
ցող ու համատարած մի սովորութիւն, այն է՝ երբ հա-
մաձայնութիւն կայացնելիս իրար ձեռք են խփում կամ

1. Նոյն-Անդ, եր. 126.

2. Բենսէ-Բուլանըխ, եր. 91 և 68.

3. Зелинский—Народно-юридическіе обычаи закавказских армянъ, եր. 5—6.

4. Эверсъ—Древнее русское право, 1835., եր. 27—28.

* Տես մեր «Նահապետական գերդաստանը» Արարատ.
1908 թ. № 8. եր. 638—639.

ձեռք կտալիս: Այդ սովորութեան բազմաթիւ փաստեր գտնուի՝ ենք նաեւ հայ ազգագրական հաւաքածոի թիւերի մէջ: Բնւանելու հարսանախօսութիւնից յետոյ համա-
ձայնութիւնը կնքուի՝ են «հարէ կըրըն», «ձեռք պագել», «հաց կիսել» և վերջապէս «գլուխներ խփել» ծիսական գործողութիւններով:

Այսպիսի օրինակներ կարող էինք առաջ բերել այս-
տեղ մի ամբողջ շարք, բայց դրանով շեղուի՝ ենք ներկայ
յօդուածի շրջանակներից: Մեր նպատակն է այստեղ վեր-
լուծել հայ իրաւաբանական սովորութիւնների մէջ գո-
յութիւն ունեցող սիմբոլները, մենք ուզում էինք միայն
շեշտել, թէ կարեւոր նշանակութիւն ունեն սիմբոլները
հայ իրաւաբանական հնութիւնների համար և թէ ինչ
նուազ ուշագրութիւն է դարձուել մինչ այժմ հայ բա-
նահաւաքների կողմից իրաւաբանական հնութիւնների այդ-
ազրիւրների վրայ:

Հայ իրաւաբանական հնութիւնները մենք կը զըտ-
նենք մեր ժողովրդի կեանքի բոլոր կողմերում, թէ ժո-
ղովրդի ներկայ կենդանի իրականութեան մէջ, ուր նա ունի
իր սեփական, անգիր մի կողեքս, և թէ անցեալ պատ-
մութեան մէջ: Հայ պատմագիրները, հայ օրէնագրքերն
ու դատաստանագրքերը, մի խօսքով հին Հայոց պատ-
մական յիշատակարանները մի կողմից և միւս կողմից՝
ժողովրդի արդի սովորոյթները, ծէսերը, հաւատալիքնե-
րը, պաշտամունքները և վերջապէս բանաւոր գրականու-
թիւնը իր բոլոր ճիւղերով մի հարուստ անդաստան է,
ուր հայ բանահաւաքն այսուհետեւ թող ջանայ գտնելու
և ժողովելու ժողովրդական իրաւաբանական հասկացո-
ղութիւնների սիմբոլները: Հայ իրաւաբանական հնու-
թիւնները*։ Այն ժամանակ միայն կասենք, որ հայ ազ-
գագրութիւնն յիրաւի ծառայում է իր նպատակին, լիա-

* Մօտիկ ապագայում այդ նպատակով լոյս ենք ընծայե-
լու իրաւաբանական հնութիւնների և ընդհանրապէս սովորու-
թական իրաւունքին վերաբերեալ նիւթեր հաւաքելու մեր
մշակած մանրամասն ծրագիրը:

կատար ամբողջութեամբ նիւթ մատակարարելով հայ կուլ-
տուրական պատմութեան ապագայ տնտեսաիրաւունքին,
Դրանով մենք ծառայած կը լինենք ոչ միայն հայ գիտու-
թեանը, այլ և հանրամարդկային կուլտուրական պատմու-
թեանը, որտեղ հայ ժողովրդի իրաւաբանական — ազ-
գագրական նիւթերը գալու են որոշ լոյս սփռելու, պարզ
կացուցանելու հասարակական -- իրաւաբանական յարա-
բերութիւնների բազմաթիւ խճճուած հարցերը, մութ,
տակաւին իրենց լուծման սպասող երկոյթները:

Խ. Սամուէլեան.

ՃԱԿԱՏԱԳՐԻ ՏՕՆԸ

(Համբարձումը)

ՎԻՃԱԿ ՀԱՆՆԼՈՒ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՎԻՃԱԿԻ ԵՐԳԵՐԸ

Հայ ազգը ունեցել է և ունի բազմաթիւ սովորութիւններ,
որոնք իրենց հնութեամբ նոյն իսկ հասնում են մինչեւ հեթա-
նոսութեան ժամանակները՝ բերելով յիշողութիւններ այգքան
հեռու ժամանակներից՝ շատ ճշգրիտ հարադատութեամբ:

Սակայն այդ հին սովորութիւնները, որոնք մեծ մասամբ
ժողովրդական տօնի բնաւորութիւն ունին, զանազան աննպատ-
հանգամանքների պատճառով անհետանում են: Պատճառները
բազմազան են. և դրանցից մէկն այն է, որ մեր ազգը քաղա-
քակրթութեան ընդունակ լինելով՝ ընդունակ է և նորն քաղա-
նելու և ընդունելու — իւրացնելու, որի հետեանքը լինում է հնե-
րի կորուստը, թէև նրանք ունենան իրենց մէջ բարձր աւան-
դութիւններ, հին փիլիսոփայութեան և մետաֆիզիկայի տար-
րեր. իսկ միւսը այն, որ ճակատագրօրէն դատապարտուած լի-
նելով պատմական սարսափելի տաքնապներին, որոնց յաճախա-
կի յաջորդականութիւնը ժամանակ առ ժամանակ շշմեցրել
է հային՝ աշխատելով խախտել նորա գոյութեան գործօններին
հիմքը, կտրելով անցեալի սրբազան սովորութիւններից, որոնք